

ՖԼՈՐԵՆՏԱՅԻ

ԳՐԱԳԻՐԸ

[ՓՈԽՆԻՐ. ԱՄԻՉԻՍԻՑ]

Նույր

Հայ դպրոցների ճախկին և ցրկայ սան-սանուհիներին.

ԸՆԾԱՑԱՑԻ

ԲՆԻՑԻՆ

1911

85 Մ

Ա-52

F B FEB 2013

2181

201A8-505

ԸՆԾԱՅԱՑԻ

« Չիջակոյն » պատկանեցողութեան ընկերութիւն
Խմբագրութեանը

85 Մ

Ա-52

5

Վրոխապատուիչ
26/1 = 911

ԱՄ

ՓԼՕՐԵՆՏԱՑԻ

ԳՐԱԳԻՐԸ

1001
1521



[ՓՈՒՐԿԲ. ԱՄԻՉԻՍԻՑ]

Նոր Տարուայ նուէր զպրցաների սան-սանճուհիներին-



ԹԻՖԼԻՍ

1911



ՓԼՈՐԵՆՏԱՅԻ

ԳՐԱԳԻՐԸ



Ա.

I

Փորրաթիւ համեստ մի գերդաստուն կար,
Աշխատաւոր հօր շուրջը հաւաքուած.
Աննշան ոռճկով, ջանքով անդադար
Պահում էր տունը հայրը ծերացած.
Օհ, նա տարածամ արեւորել էր.
Աշխատանքը՝ շատ, ոռճիկը՝ չնչին.
Եւ պաշտօնից զատ, նա ըստիպուած էր
Ա՛յլ ճանապարհով ճարել հացազին:

Նա ծրրարների փաթեթի վերայ
Յանձն առաւ հասցէք մակագրելու.
Հինգ հարիւր գրուած հասցէի համար
Խոստացան նորան երեք Փրանկ*) տալու.
Բայց տաժանելի այդ աշխատանքից
Մերթ տրանջում էր ճաշի ժամանակ—

«Մաշուեցայ ես այս տարտամ վիճակից,
Եւ տրկարացան աչքերըս համակ»:

II

Ունէր նա որդի տասներկու ամաց,
Որ մի տարրական դըպրոցի էր սան.
Չորրորդ դասարանն էր արդէն հասած,
Խիստ ջընորհալի տրղայ պատուական,
Անուէն էր Ջուլեօ, հօրը սիրելի,
Նորա արևով և մայրն էր խընդում.
Ալևոր հօրը ուզում էր օգնի,
Եւ գիշեր ցեքեկ ողջ այդ էր խորհում:

*) Մի Փրանկը 25 կոպ. է մեր փողով:

«Ես կը պարապեմ, հայր իմ, քո տեղակ,
Մեր ձեռագիրներն իրար են նրման».
Ասաց նա մի օր ճաշի ժամանակ.
Բայց լըսեց հօրից խօսք բացասական.
«Դո՛ւ, որդեակ, ջանն դեռ լաւ ուսանել.
Գին դիր, իմ Ջուլեօ, ուսման մեծագին.
Չնչին լոկ ջանք է ծրրարներ գրել,
Որից քեզ օգուտ չըկայ բնաւին,
Խիղճըս կըտանջէ ինձի յարաժամ՝
Թէ խըլեմ քեզնից քո ոսկէ ժամեր,
Ո՛հ. լոկ այդ կըտայ ինձ մահ տարաժամ.
Եթէ անգամ ևս կըկնես քո խօսքեր»:

Ջուլեօն խելօք էր. գիտէր՝ եթէ որ
Նոյն խնդրով դիմէ իւր հօրը կրկին՝
Վիշտ կըպատճառէ հօրը ալևոր.
Վըճուեց գաղտաբար օգնել հայրիկին:

III

Տաճաներկու ժամին հայրն սովորաբար
 Աւարտ էր տալիս իւր պարապմունքին.
 Եւ յոգնած, ճնշուած մարմնով դալկահար՝
 նա պատրաստուում էր մտնել անկողին:

Մի խարխափ գիշեր, թանձրամած խաւար,
 Երբ ողջ բնութիւն լուռ էր ու քնած՝
 Վերկացաւ Ձուլեօն և վառեց դամբար.
 Թէև նա պարկած՝ բայց, անխ, չէր քրնած.
 Լրո՞ւկ ու մընջիկ, անձայն քայլերով
 Մօտեցաւ իւր հօր գրրասեղանին.
 Լըցուած, հեղեղուած հօր տենչով, սիրով-
 Վրճուեց միշտ այսպէս օգնել հայրիկին:

IV

Ահա անեղ դէպ հօր ծրրարների
 Գրրասեղանի վերայ կուտակուած.
 «Ա՛խ հայր ջան, հայր ջան, բո հոծ վշտերի
 Մոքա՞ են սրտիդ քարեր ծանրացած.
 Թո՞ղ Ձուլեօղ ապրի հայրիկ, քեզ համար,
 Նա կը փարատէ հոգսերդ ծովացած.
 Եւ դու կըտեսնես—ծրրար անհամար
 Պատրաստ են արդէն ձեռքովրդ գրրուած»:

Եւ նըստեց՝ գրրեց, գրրեց՝ ու դի՛ղեց.
Հօր անհուն սիրով նա ոգևորուած.
Եւ գրրածներից անեղ դէ՛գ կազմեց,
Գրրասեղանի վերայ դարսոտած:
Յոգնում էր ձեռքը խեղճ պատանեկին
Դիզուած ծրարներն անդուլ գրրելուց,
Թէև մերթ հանգիստ էր տալիս ձեռքին՝
Բնայց չէր դադարում հօրը օգնելուց,
Հարիւր վաթսուն ծրար երբ նա մակագրեց՝
«Ահդ՝ բաւական է այս չափս այս գիշեր»:
Հօր գրասեղանը նա կարգի բերեց,
Մըտաւ անկողին ու փակեց աչեր:

V

Այգը բացուեցաւ, խուսափեց խաւար,
Փըպտաց արևը երկրի երեսին.
Ձուլեօն զարթեցաւ: Իսկ հայրը, իսպառ
Ձիմացաւ զաղտնիքն անցած գիշերին:
Նա խնդաց, հրճուեց, երբ յաջորդ օրը
Մօտեցաւ դաժան գրրասեղանին.
Եւ համարելով իւր ծրարները.
Ձեռքերը գրրեց որդու ուսերին՝

«Իէ, Ձուլեօ», ասաց. «տեճնճում ես իրչափ
Աշխատել է հայրդ երեկ գիշերին,
Երկու չնչին ժամ՝ հարիւր վաթսնաչափ
Մըրար է գրել, մի Փրանկի գին:
Երրորդ մասն գործիս ես աւարտեցի,
Ես այսպէս յաջող երբէք չեմ գրրած:
Եթէ ես այսպէս արագ գրրեցի,
Տակաւին ուրեմն կորովս չէ մարած»:

Ուրախ էր Ջուլիօն—այժմ որոշ էր,
 Որ միշտ կըզրէ ծրրար—հասցէներ:
 Տասներկու ժամից նա ամեն գիշեր
 Գրրում—կիտում էր ծրրարի դէզեր:
 Անցան շատ օրեր: Ջուլիօն գրրում էր.
 Հայրը անտեղեակ՝ ոչինչ չէր ըզգում.
 Նա գոհ էր, ուրախ. նա երջանիկ էր—
 Սրտամաշ գործը աւարտ էր հասնում:
 Բայց ծրրար—հասցէք մակագրելով՝
 Դասական գործի մէջ խիստ էր կաղում—
 Նա հրգօր քրնից անգօր ընկճուելով՝
 Գրրքերի վերայ էր նիրհում—նընջում:
 Օհ, խեղճ Ջուլիօյի բունը պակաս էր.
 Առաւօտները հագիւ էր զարթնում.
 Նա չէր պատրաստում օրական դասեր.
 Դպրոց էլ, կարծես, սիրով չէր գընում:

Նըկատեց հայրը Ջուլիօյի արարք.
 Բայց չըհասկացաւ խորհուրդ գաղտնիքի.
 Նա յանդիմանեց որդու վարքն անկարգ՝
 Ասելով նորան խօսքեր այսպիսի—

«Դու չէիր տալիս առաջ ինձ առիթ
 Կոպիտ խօսքերով քեզ յանդիմանել.
 Ջուլիօ, զգուշացիր—վարքդ է մահառիթ...
 Չէ՞ որ քեզ երկինքն մեզ յոյս է գրել»:

VIII

Հօր այս կշտամբանքն որդուն ներգործեց.
 Առաջին անգամն էր նա այս լրտում.
 Հօրը չըխաբել—նա իւր մէջ վճռեց.
 Բայց սիրտն՝ հօր սիրով ուժգին էր թընդում:

IX

Հէնց միևնոյն օր, ճաշի ժամանակ
 Հայրն բացագանչեց իր ուրախ սրտից—
 «Այս մի ամսու մէջ երսուն երկու ֆրանկ
 Փող եմ աշխատել իմ ծրրարներից»:
 Եւ մի մեծ տուփ, լի անուշ քաղցրեղբով
 Հանեց գրպանից հայրն այն ըոպէին
 Ու բաժին արաւ գոհունակ սրբտով
 Արդար վաստակի պտուղն ամենքին.
 Բերկրեցաւ Զուլեօն, վրճիւր փոխեց.
 Որոշեց—դարձեալ օգնել հայրիկին.
 Բայց նա այս անգամ հաստատուն ուխտեց
 Պատրաստել դասերն իր ժամանակին:
 Հայրը ուրախ էր—որ պարապ ժամերն
 Օգտաւէտ էին անցնում իր համար.
 Բայց չէին փախչում նորա սյն վշտերն՝
 Որ Զուլեօն դառնում էր նրանց պատճառ:

X

Հօր կրշտամբանքը լրսում էր որդին.
 Բայց դարձեալ իւրն էր նա շարունակում,
 նա ամեն գիշեր հօր ծրրարներին
 նոր ու նոր կոյտեր էր աւելացնում:
 Սակայն օրէցօր տրկարանում էր...
 Գաղտնիքն չըբանալ թըւէր դժուարին,
 Յոգնածութիւնը միշտ սաստկանում էր
 Եւ նրկատելի եղաւ հայրիկին...

XI

Երկու ամիսներ անցան, սըրացան...
 Մըռայլ էր նայում հայրը Ջուլեօյին:
 Վերջապէս մի օր գընաց վարժարան
 Հարցանել որդու պարապմանց մասին:

«Նա ուրիշներից բընաւ յետ չէ մընում.
 Նա ընդունակ է, տըղայ սըրամիտ.
 Բայց նախկին եռանդն նա չէ ցուցանում
 Եւ պարապելու, կարծես, չունի սիրտ.
 Շատ անգամ էլ նա դասական ժամին
 Քընում—յորանջում է յայտ յանդիման.
 Անուշադիր է նա իր դասերին.
 Գոզէս յոգնած է պատուական տըղան.
 Շարադըութիւնք խիստ կարճ է գըրում,
 Եւ շատ վայր ի վեր անկապ մըտքերով.
 Առաջ այդպէս չէր. լաւ էր ուսանում:
 Բայց դեռ չէ կորցրել տըղան իր կորով»:

XII

Իրպրոցի տեսչից հայրն այս որ լրսեց՝
Տուն վերադարձաւ խիստ յուզուած սրտով.
Նոյն երեկոյին Ձուլեօյին կանչեց
եւ յանդիմանեց խոժոռած դէմքով.

«Տեսնում ես, Ձուլեօ, ինչպէս ամեն օր
ես չարչարուում եմ, ես կեանք եմ մաշում,
եւ մեր գերդաստան խընամբը բոլոր
Մաշուած ուսերիս վրայ եմ տանում:
Իսկ դու չես խղճում ծերուկ հայրիկիդ.
Դու խիստ անսիրտ ես, Ձուլեօ իմ դաւակ,
Փոյթ չէ քեզ բընաւ՝ թէ ոնց ամենքիդ
Դառնն քրտինքով է ճարուում վաստակ.
Դու ծուլանում ես, դու չես պարապում.
Ուսման գործի մէջ դանդաղ ես քայլում.
Վարժարան անգամ անսիրտ ես գընում.
Օհ. անգին ուսման դու գին չես գընում»:

«Ո՛չ, ո՛չ, հայրիկ ջան, ինձ մի նախատիր...»
Հոգւոց հանելով՝ Ձուլեօն մըրմընջաց,
Գաղտնիքն՝ իսկապէս պատմել պատրաստէր.
Թէ չընդհատէր հայրն նորա ասացուած—

«Քրտնաթոր վաստակս վարձով աննըշան
Քեզ քաջ յայտնի է, որդեանկ սիրելի.
Տեսնում ես, որ ես չունիմ օգնական.
Եւ դու չես խղճում հորդ ծերունի.

Գիտցիր—որ դու ես նեցուկ իմ ալեաց,
Դու ես ապաւէն թշուառ օրերիս.

Պիտի վաստակենք ձեռք ձեռքի տըւած,
Միայն այդ կրտայ շունչ ալևորիս.

Այս ամսուայ դառն աշխատանքիս վարձ
Յուսայի պարգև առնել հարիւր Փրանկ.

Բայց, աւանդ, այսօր իմացայ յանկարծ—
Որ չըկայ ինձ վարձ և ո՛չ մի Փրանկ...

Ահա դրութիւնս, ահա իմ վիճակ.

Ճերեկ ու գիշեր անընդհատ տանջանք՝
Իսկ վանք. . մի քանի աննըշան Փրանկ.

Ի՛է, խղճահարուիր, անսիրտ իմ որդեակ»:

XIII

Ջուլեօն պատրաստ էր գաղտնիքը պարզել,
 Հօր ձախորդութիւնն խանգարեց նորան.
 Դարձեալ որոշեց—լրօել՝ բայց գործել.
 Եւ միշտ հայրիկին օգնել անպայման—

«Վիշտ եմ պատճառում քեզ, հայր
 պատուական,
 Օհ, ես կրքաւեմ յանցանքըս կրկին.
 Կուսանիմ, կանցնիմ աւագ դասարան,
 Կը բաղցրացընեմ քրտանցդ դառն գին»:

Թորհում էր այսպէս Ջուլեօն ինքն իրան,
 Եւ ամեն գիշեր ծրրարներ գրրում.
 Երկու ամիսներ անցան սահեցան.
 Պատրաստ ծրրարներն դէզ էին կազմում...:

XIV

Հայրըն ըսկսում էր ատել Ջուլեօյին.
 Ոչ ցանկանում էր նորա հետ խօսել.
 Համոզուած էր թէ՛ կորած է որդին.
 Երեսին անգամ չէր ուզում նայել:
 Մաշոււմ էր տրդան հօր այս վարմունքից,
 Բայց և խղճում էր լի կարեկցութեամբ.
 Եւ իւր գիշերեան պարապմունքներից
 Թորհում էր խորշել հաստատ որոշմամբ.
 Բայց դարձեալ մըտքեր ու անվերջ մըտքեր
 Յուզում—տազնապում էին Ջուլեօյին.
 «Ես հնց չըզըրեմ հօրըս ծրրարներ...
 Օհ, ես գող կըլնեմ հօրս աշխատանքին.
 ափուկ անկողնում ես տաք տաք քընեմ՝
 Եւ հիվ վերջացնէ հօրըս ծրրարներ.
 Ռհ, ես ի՛նչ սրտով սուրբ պարտքըս ժխտեմ,
 Չէ, ես կաւարտեմ տըւած պատուէրներ»

Նա վեր էր կենում անկողնից թաքուն
 Լուռ, մօտենում էր գրրասեղանին...
 Այս, նորա համար չրկար հանգիստ բուն՝
 Քանի ծրրարներն դեռ պատրաստ չէին.
 Նա մըտածում էր՝ թէ գէթ մի անգամ
 Հայրը յանկարծուստ քրնից կարթնանայ,
 Եւ խաբէութիւնն բացուելով յայնժամ
 Խորհուրդ գաղտնիքի արդէն կիմանայ:

Մի անգամ ճաշին մայրը նրկատեց,
 Որ Ձուլեօն իրան տրկար է ըզգում,

«Ձուլեօ, տրկար ես» վրդովուած հարցրեց,
 «Եւ ինչո՞ւ ես դու մեզնից այդ ծածկում»:

Դառնալով ապա դէպի ամուսին՝
 Մըտայոյզ դէմքով սկըսեց խօսել—

«Ձուլիօն հիւանդ է, և տես, երեսին
 Առողջ տրղայի գոյն չէ մընացել»:

«Հիւանդ է խղճից, այդպէս չէր լինի.
 Եթէ նա սիրով գընար վարժարան.

Եթէ նա, իբրև տրղայ խելացի՝

Մեծ գին կրդնէր թանկագին ուսման»:

«Բայց տրղան հիւանդ, գունատ է, նիհար,
 Չենք կարող թողնել նորան մենք անհող»:

Թէև կրկնում էր մայրը անգաղար՝

Բայց զայրացած էր հայրը և անհող,

«Հող չէ ինձ բընաւ». հօր պատասխանն էր:

XVII

Ձուլեօյի սիրտը մինչ իսպառ բեկաւ...:
Այդ ցուրտ խօսքերը նա ինչպէս տանէր.
Առոյգ պատանին յուսահատեցաւ—

«Մի՞թէ, յիրաւի» նա մըտածում էր,
«Հայրըս չէ սիրում ինձ որպէս առաջ...
Այո, չէ սիրում, չունի նախկին սէր»:
Ասում էր, կրկնում նա լալահառաչ.

«Երբ հազրս չնչին՝ հօրս պատճառում էր
Ի՞նչ խիստ հոգեմաշ վրդովմունք անբաւ.
Մինչ այն աստիճան նա ինձ սիրում էր...
Իսկ արդ՝ ասում է—«հոգ չէ ինձ բընաւ»,
Ի՞նչ պէտք է արած՝—հնազանդութիւն...
Սիրիւր յաւիտեան ինձ, անգին հայրիկ.

Ձեմ շարունակի իմ խաբէութիւն
Եւ կրմերկացնեմ քեզ ամեն գաղտնիք...
Առանց քո սիրոյն ես ի՞նչպէս շընչեմ.
Ձէ՞ որ ապրում եմ ձեզ համար միայն.
Կամ հնց ընթանամ ես սիրոյդ ընդդէմ.
Երբ իմ ողջ կեանքը ձեզ եմ պարտական.
Ձեմ գրբիլ ծըրար, կերթամ վարժարան.
Եւ գիշերները դասերս կրսերտեմ,
Էլ քեզ չեմ խաբիլ, հայրիկ, յաւիտեան.
Եւ ամեն գաղտնիք քեզ բաց կըյայտնեմ»:

XVIII

Որոշեց հաստատ պատուական տրդան...
Բայց հասաւ գիշեր ..՝ սիրտը չըժուժեց—
Դարձեալ ծըրարներ և գրասեղան..
Աւելի արագ գրել պատրաստուեց.
Գրասեղանին երբ նա մօտեցաւ՝
Մտքով նա մարմնով շարժուեց ու ցնցուեց,
Երբ մթութեան մէջ նա գրքին դիպաւ,
Գիրքը վայր ընկաւ և շառաչ հանեց:
Եթէ հայրիկը այս ձայնը լրսէր՝
Հարկաւ կը զարթէր. բայց ի՞նչ կը տեսնէր,
Իւր Զուլեօն նստած՝ ծըրար է գրում,
Սրտամաշ հասցէքն նա է պատրաստում,
Նա կարծեց թէ հայրն ահա գալիս է,
Եւ մըթութեան մէջ իրան է բռնում,
Գուցէ մայրիկն էլ քրնիցը զարթէ...
Սարսափ ու երկիւղ է իրան տիրում:

Եթէ տեսնէ հայրն իրան գրելիս
Որքան կըմնայ ինքն ամօթապարտ...
Զուլեօն այսպէս էր խորհում ու լալիս:
Նստած իւր տեղում անշարժ ու հանդարտ
Շունչն իրան քաշած ականջ էր դնում.
Տեսաւ, որ հայրը քրնից չէ գարթել.
Դրսից սայլերի ճրոխնչն էր լրսում,
Երբ նա ծըրարներն սկսեց գրել...

XIX

Գրքի շրճինդից զարթել էր հայրիկ,
Ըզմայլուած հոգևով նայում էր որդուն,
Գլուխն ալևոր կախելով լրճիկ,
Գանգրահեր գլխին զաւակին սիրուն...
Ամեն բան այժմ պարզ է հօր առաջ.
Եւ սրտի վերայ սէր, զղջում տիրեց,
Պատրաստ էր հայրը հանել խոր հառաչ,
Գրրկել իւր Զուլեօն, բայց իրան պահեց:
Նա մեխուած մընաց իր կանգնած տեղում
Եւ արգելում էր իրեն շունչ բաշել.
Անթարթ դիտելով հրճում էր սրտում...
Բայց... նա չըկարաց այլ ևս ժուժել—
Զուլեօն արձակեց մի սուր ճիչ արձակ.
Հայրը փարուեցաւ Զուլեօյի վրդին.

«Ներիր ինձ, հայրիկ», լրսուեց աղաղակ.
«Դ՛ն ներիր», ասաց հայրը կաթոզին:

Բիւր համբոյրներով երեսը ծածկեց,
Եւ հեկեկալով ասաց զաւակին.

«Այժմ ամեն բան իմ առջև պարզուեց.
Ո՛հ, պէտք է ներես ինձ, որդեակ անգին»:

Եւ գրկեց որդուն ու մօր մօտ տարաւ.
Նա քընատեղից իսկոյն զարթեցաւ:

«Համբուրիր սորան», խնդազին ասաց.
«Սորան մեզ հրեշտակ պարզեց Աստուած»:
Երեք ամիս է քուն չունի Զուլեօն,
Աշխատել է նա ծերուկ հօր համար...
Իմ անբիծ մանուկ, իմ անգին Զուլեօն
Հաց էր վաստակում ծընողի համար,
Մինչդեռ ես, ո՛հ ես, բընաւ անտեղեակ՝
Վըշտացնում էի իմ հըրեշտակին,
Վիրաւորելով բեզ, Զուլեօ հոգեակ.

Այսօր մեղաւոր եմ քո առաջին.

Եւ միշտ պարտական քո սուրբ վաստակին»:

Համբոյր շաղ տալով Զուլեօյի վերայ՝
Զերմ սիրով գրկեց մայրը նախշունին.

«Ե՛կ, ննջիր որդեակ. Աստուած է վկայ՝
Որ դո՛ւ ես մեր տան պարգև երկնային»:

XX

Խըտըտեց հայրը սիրուն գաւակին,
Տարաւ ննջարան, դըրեց անկողին.
Շորերը հանեց, բարձերն թափ տըւեց,
Ծածկեց վերմակը ու կանգնեց, նայեց...

«Հայրիկ, ինչ լաւ է. շնորհակալ եմ».
Ասում էր Զուլեօն. «ես երջանիկ եմ.
Բայց դո՛ւ էլ գընա, պարկիր, հայրիկ ջան.
Հերիք է օրուան տանջանքդ դաժան»:

XXI

Հայրը չըզընաց, սիրուն զաւակի
Անմեղ երեսին անթարթ նայում էր.
Ուզում էր տեսնել—ի՞նչպէս կըբընի
Իւր սիրուն Ջուլիօն... և նա քընած էր:

Անցաւ եռամսեայ ծանր հըսկումը—
Հանգիստ է քընում Ջուլիօն պատուական.
Նա երջանիկ է, բաղցր է և բունը.
Իսկ երազները ի՞նչ զմայլական...

«Քընիր իմ հոգեակ, քընիր իմ անգին»
Չէր դադարում հայրն օրօրք ասելու.
Եւ աչք սևեռած սիրուն Ջուլիօյին՝
Ա՛խ, չէր կշտանում նըրան նայելուց .

Միւս առաւօտուն Ջուլիօն շարթեցաւ,
Աչքերը բացեց և ի՞նչ նա տեսաւ—
Իւր բարձի կողքին հանգչում էր ազատ
Գըլուխն ալեգարդ հօրը հարազատ.
Այսպէս էր հայրը գիշերն անցկացըել—
Քընած՝ տակաւին դեռ նա չէ զարթել...

Ըճճայացի-

« Ազգային գրադարան



NL0400033

2181

Պ Ի Ն Ը Յ Կ.

Քիֆիս Ազարուն «Էդիսուս», Դանսիսկ. փ.